

Գ Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹՈՂՔԵՐԻ

1. Սույն գնահատմամբ սահմանվում է բնապահպանական թողքերի մեծությունների սահմանման մեթոդիկան:

2. Յուրաքանչյուր ջրավազանային տարածքի համար բնապահպանական թողքի մեծությունը սահմանվում է առանձին՝ հաշվի առնելով նշված մեթոդիկան և տվյալ գետավազանի հիդրոմորֆոլոգիական, հիդրոաշխարհագրական, հիդրոքիմիական, հիդրոֆիզիկական, բնապահպանական ու այլ առանձնահատկությունները և ներառվում ջրավազանային կառավարման պլաններում:

3. Որպես բնապահպանական թողքի մեծություն ընդունվում է ջրի ելքի այնպիսի մեծություն, որի դեպքում գետն արդեն գործել է բնական պայմաններում:

4. Բնապահպանական թողքի մեծությունը հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել գետի հիդրոլոգիական ռեժիմը, աշխարհագրական գոտին, որում այն գտնվում է, նրա տնտեսական օգտագործման ձևը և աստիճանը, ջրի քանակական և որակական կազմը և այլ գործոններ: Ուսումնասիրված գետավազանների ներկայումս գործող հիդրոլոգիական դիտակետերի համար բնապահպանական թողքի արժեքը որոշելիս որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն ելքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին ելքը:

5. Չուսումնասիրված գետերի և գետավազանների համար նվազագույն ելքերի վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտվել հիդրոլոգիական

ատլասում պատկերված բազմամյա ձմեռային ժամանակաշրջանում առավել նվազագույն ելքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի հոսքի մոդուլների քարտեզից՝ դուրս բերելով հոսքի միջին մոդուլի արժեքը (լ/վ.կմ<sup>2</sup>):

6. Այնուհետև որոշվում է տվյալ գետավազանի հիդրոլոգիական դիտակետերի համար նվազագույն հոսքի միջին մոդուլի արժեքը՝ հետևյալ բանաձևով՝

$$M_{\text{միջ}} = (f_1 m_1 + f_2 m_2 + \dots + f_n m_n) / F, \quad (1)$$

որտեղ՝  $M_{\text{միջ}}$  –ը տվյալ մակերեսի նվազագույն 10 օրերի միջին մոդուլն է, լ/վ.կմ<sup>2</sup>,  $f_i$ –ն երկու հարևան իզոգոծերի միջև ընկած մակերեսն է (կմ<sup>2</sup>),  $m_i$  –ը երկու հարևան իզոգոծերին համապատասխանող մոդուլների կիսագումարն է (լ/վ.կմ<sup>2</sup>),  $F$  –ը այդ մակերեսների ընդհանուր գումարն է ( $f_1 + f_2 + \dots + f_n$ ) (կմ<sup>2</sup>):

Համակարգով աշխատելիս ԱրկԳիս-ում մոդելավորվում է (1) բանաձևը, որի արդյունքում ավտոմատ կերպով ստացվում է ուսումնասիրվող գետավազանի յուրաքանչյուր դիտակետի համար նվազագույն 10 օրվա հոսքի մոդուլի միջին արժեքը:

7. Հոսքի նվազագույն մոդուլի արժեքից (լ/վ.կմ<sup>2</sup>) կատարվում է անցում հոսքի նվազագույն ելքի արժեքին (մ<sup>3</sup>/վ) հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{միջ}} = M_{\text{միջ}} F / 1000, \quad (2)$$

որտեղ՝  $Q_{\text{միջ}}$  –ը տվյալ դիտակետում գետային հոսքի նվազագույն էկոլոգիական ելքն է (մ<sup>3</sup>/վ),  $M_{\text{միջ}}$  –ը տվյալ դիտակետի համար հաշվարկված նվազագույն 10 օրերի հոսքի միջին մոդուլն է (լ/վ.կմ<sup>2</sup>),  $F$  –ը մինչև տվյալ դիտակետն ընկած ջրհավաք ավազանի մակերեսն է (կմ<sup>2</sup>):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ

ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ

1. Սույն գնահատմամբ սահմանվում է խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի սահմանման մեթոդիկան:

2. Յուրաքանչյուր ջրավազանային տարածքի և բնակավայրի համար խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի մեծությունը սահմանվում է առանձին՝ հաշվի առնելով նշված մեթոդիկան և տվյալ գետավազանի հիդրոմորֆոլոգիական, հիդրոաշխարհագրական, հիդրոքիմիական, հիդրոֆիզիկական, բնապահպանական ու այլ առանձնահատկությունները, ինչպես նաև բնակավայրի ջրամատակարարման տեսակն ու սոցիալական զարգացման միտումները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N - Ն որոշման N 3 հավելվածում նշված նորմերը:

3. Տվյալ բնակավայրի համար ջրի պահանջարկը խմելու-կենցաղային նպատակով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = N q_{\text{մ}} K_{\text{ժամ}} K_{\text{օր}} K_{\text{շկ}}$$

որտեղ՝ N-ը բնակչության թիվն է,  $q_{\text{մ}}$ -ը՝ ջրօգտագործման միջին օրական նորման,  $K_{\text{օր}}$ -ը՝ օրական անհավասարաչափության գործակիցը,  $K_{\text{ժամ}}$ -ը՝ մեկ ժամվա անհավասարաչափության գործակիցը, իսկ  $K_{\text{շկ}}$ -ն՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից նախատեսված տվյալ ջրամատակարարման համակարգի ջրակորստի գործակիցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3  
 ՀՀ կառավարության 2011 թվականի  
 հունիսի 30 -ի N 927 - Ն որոշման

Ն Ո Ր Մ Ե Ր

ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՋՐԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ

Ջրամատակարարման տեսակները	Ջրօգտագործման միջին օրական նորմն ըստ 1 բնակչի, լիտրով	Անհավասարաչափության գործակիցը	
Ջրագիծ, կոյուղի, կենտրոնական տաք ջրամատակարարում	200-400	1,05-1,09	1,20-1,25
Ջրագիծ, կոյուղի և գազատաքացուցիչներ	150-230	1,09-1,11	1,25-1,30
Առանց ջրագծի և կոյուղու	30-50	1,20-1,33	1,80-2,00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ԴԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ